

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի մայիսի 6-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

Նիստին մասնակցում էին հետևյալ Շահառուների խորհրդի անդամները՝

Արթուր Սաքունց	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Արայիկ Հովհաննիսյան	«Հայաստանի ավազանիների ասոցիացիա» ՀԿ
Վեհանուշ Հովհաննիսյան	«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ
Կարեն Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
Աշոտ Ոսկանյան	«Ագրոգարագում» ՀԿ
Հրաչիկ Ջավադյան	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամ
Վանիկ Սողոմոնյան	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ
Սամսոն Խաչատուրյան	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ (Հակոբ Աբրահամյանի լիազոր ներկայացուցիչ)
Սեյրան Մարտիրոսյան	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ
Լևոն Բարսեղյան	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Տոնական Ղազարյան	«Շենիկ» ՋՕԸ
Վարդան Համբարձումյան	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա» ԻԱՄ
Սամվել Սարգսյան	«Արարատ» ՋՕԸ (Վիլիկ Բարսեղյանի լիազոր ներկայացուցիչ)

Նիստից բացակայում էին.

Լիլիթ Ավագյան	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ
Վիլիկ Բարսեղյան	«Արարատ» ՋՕԸ
Արամ Սուքիասյան	«Հայաստանի երիտասարդների ազգային խորհուրդ» ՀԿ
Հակոբ Աբրահամյան	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
Նազելի Վարդանյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, գլխավոր իրավախորհրդատու
Նորա Մարտիրոսյան	Իրավախորհրդատու, Կառավարման խորհրդի քարտուղար
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Գայանե Հարությունյան	Գրասենյանի կառավարիչ, ՀՄԿ
Նաիրա Աթունյան	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Հայաստան

Հասմիկ Ասլանյան
Քրիստինե Հովհաննիսյան

«Շողեր միություն» ՀԿ
«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ

Նիստին ներկա էին նաև հետևյալ ՋԼՄ ներկայացուցիչները՝

Լուսինե Սկրտչյան, «Հայլուր»

Անժելա Օսիպովա, «Նովոստի-Արմենիա» Լ.Գ.

Լիանա Եղիազարյան, «Արմենպրես» Լ/Գ

Նիստը նախագահելու համար առաջարկվեց ՇԽ անդամ Արթուր Սաքունցի թեկնածությունը և հաստատվեց միաձայն: Նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

N	Սկիզբը	Օրակարգի հարց	Ձեկուցող/պատասխանատու
1.	15:00	Կառավարման խորհրդի անդամի թափուր պաշտոնի համալրում (փակ գաղտնի քվեարկություն)	Նիստի նախագահող
2.	16:00	Այլ հարցեր ա) «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում իրականացրած արտագնա հանդիպման արդյունքների ներկայացում բ) առաջիկա գործողությունների հստակեցում	ՇԽ անդամ Սեյրան Մարտիրոսյան

Օրակարգի վերաբերյալ հանդես եկավ ՇԽ անդամներ Վ. Համբարձումյանը և Ա. Հովհաննիսյանը և առաջարկեցին ԿԽ անդամի ընտրության հարցը (օրակարգի առաջին հարց) տեղափոխել և քննարկել որպես օրակարգի երկրորդ հարց՝ նիստին ուշացումով ներկայացող անդամներին սպասելու նպատակով:

Նախագահողն առաջարկեց Ս. Հիրնիակի մայիսի 5-ի պատասխան նամակի քննարկումը ներառել այլ հարցերի մեջ:

Վերոնշյալ վերաձևակերպմամբ նիստի նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը. օրակարգը հաստատվեց 11 կողմ և 2 ձեռնպահ ձայներով (Ա. Սաքունց և Լ. Բարսեղյան):

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

ա) «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում իրականացրած արտագնա հանդիպման արդյունքների ներկայացում

Օրակարգի հարցը ներկայացնելու նպատակով ձայնը տրվեց ՇԽ անդամ Ս. Մարտիրոսյանին: Նա ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում Բազմադրյուր գյուղում ապրիլի 2-4 իրականացվող «Անցում բարձրարժեք գյուղատնտեսության» թեմայով դասընթացներին մասնակցության արդյունքում իր կողմից գրանցած նկատառումները: Ընդհանուր առմամբ, Ս. Մարտիրոսյանը դասընթացները գնահատեց դրական և արդյունավետ, սակայն թերացումներ համարեց այն, որ

մասնակիցներին համառոտագրեր չէին տրամադրվել, ինչպես նաև այն, որ դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը ուշացումով է ներկայացվում:

Ծրագրի շրջանակներում ԷյՍԻԴԻԱյ/Վոկա և ՎԻՍՍԱ+ կազմակերպությունների կողմից անցկացվող դասընթացների վերաբերյալ արտահայտվեց նաև ՇԽ անդամ Տ. Դազարյանը և բարձր գնահատեց իրականացվող աշխատանքները և դրանց արդյունավետությունը:

բ) Առաջիկա գործողությունների հստակեցում

1. ՇԽ անդամներն առաջարկեցին հանդիպում անցկացնել «Ջրից դեպի շուկա» ենթածրագրի իրականացնող կազմակերպությունների մասնակցությամբ. հանդիպման ձևաչափի առումով առանձնացվեցին հետևյալ կարևոր կետերը՝

- խնդրել պատասխանատուներին ներկայացնել իրականացված աշխատանքների շրջանակը, առաջիկա գործողությունների պլանը,
- խնդրել իրականացնողներին ներկայացնել գրավոր նյութեր դասընթացների և ծրագրային այլ գործողությունների վերաբերյալ,
- խնդրել «շուկայական տեղեկագրի» պատասխանատուին ներկա գտնվել հանդիպմանը,
- անցկացնել մեկ ընդհանուր հանդիպում վարկային բաղադրիչի և «Ջրից դեպի շուկա» ենթածրագրերի համար մայիսի 23-ին:

2. ՇԽ անդամ Վ. Սողոմոնյանն առաջարկեց ՇԽ անդամներին՝ որպես հայ գյուղացիության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ուղերձով հանդես գալ և դիմել ՀՄԿ-ին չդադարեցնել և հնարավորինս չուշացնել ՀՄՀ-Հայաստան ծրագրի ֆինանսավորումը:

Այդ կապակցությամբ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ապրիլ-հունիս եռամսյակի հատկացումն արդեն ստացվել է, սակայն մասամբ: Հատկացման պահանջում տեղ էր գտել «Ճանապարհաշինության» ծրագրի առաջին փաթեթի պայմանագրերի գումարը, որը տեխնիկական պատճառներով հետաձգվում է: Ընդհանուր առմամբ, դա կապվում է ծրագրի մեծության և տեխնիկապես բարդ լինելու հետ:

ՇԽ անդամ Ս. Մարտիրոսյանը և բնապահպանական դիտորդ Կ. Գանիելյանն իրենց մտահոգությունն արտահայտեցին այն մասին, որ նախկին նախագահ Ռ. Քոչարյանի պատասխան մամակը հասանելի չի եղել հասարակությանը և իրենք, որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ հնարավորություն չեն ունեցել իրենց վերաբերմունքն արտահայտել հարցի կապակցությամբ:

Արա Հովսեփյանը կիսեց վերոնշյալ մասնակիցների մտահոգությունն այն առումով, որ ՀՄԿ կողմից գրված նամակները որոշ ժամանակ հետո դառնում են հանրային սեփականություն և դրվում են ՀՄԿ ինտերնետային կայքում: Նա առաջարկեց ՇԽ անդամներին հանդես գալ նախաձեռնությամբ՝ դիմել ՀՀ նախագահի աշխատակազմին խնդրանքով, որպեսզի ՀՄԿ փորձը կիրառվի նաև Հայաստանում, մասնավորապես դեսպան Ջոն Գանիլովիչի և ՀՀ նախագահի վարած պաշտոնական նամակագրությունը կապված ՀՄՀ-Հայաստան ծրագրին հասանելի լինի ՀՄՀ-Հայաստանի և ՀՀ նախագահի պաշտոնական ինտերնետային կայքերում:

Քննարկման արդյունքում նախագահողը գրանցեց հետևյալ առաջարկությունները և առաջարկեց քվեարկել (համապատասխան տեղեկատվության պայմաններում Վ. Սողոմոնյանը հանեց իր առաջարկությունը)՝

1. Լսել ՊՈԱԿ-ի հաշվետվությունը, գրանցված արդյունքները և վերլուծությունը Հայաստանի կատարողականի վերաբերյալ (եթե հնարավոր է ապահովել նաև ՀՄԿ մասնակցությունը).

առաջարկությունը հաստատվեց միաձայն:

2. Դիմել ՀՀ նախագահի աշխատակազմին՝ դեսպան Ջոն Դանիլովիչի և ՀՀ նախագահի՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրին առնչվող պաշտոնական մամակագրությունը հասանելի դարձնել հանրությանը ՀՄՀ-Հայաստանի և ՀՀ նախագահի պաշտոնական ինտերնետային կայքերի միջոցով (այն պահից սկսած, երբ գաղտնիության շրջանն ավարտված է)՝ հաշվի առնելով ՀՄԿ փորձը:

առաջարկությունը հաստատվեց 11 կողմ և 2 ձեռնպահ ձայներով (Ա. Հովհաննիսյան և Ա. Ոսկանյան)

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

Կառավարման խորհրդի անդամի թափուր պաշտոնի համալրում (փակ գաղտնի քվեարկություն)

ՇԽ հետևյալ անդամները գրանցվեցին որպես ԿԽ անդամի թափուր պաշտոնի թեկնածուներ և փակ գաղտնի քվեարկության արդյունքում գրանցվեցին հետևյալ արդյունքները՝

N	Անուն, Ազգանուն	Կազմակերպություն	Չայներ
1	Աբրահամյան Հակոբ	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ	1
2	Ավագյան Լիլիթ	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ	0
3	Հովհաննիսյան Վեհանուշ	«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ	0
4	Ղազարյան Տոնական	«Շենիկ» ՋՕԸ	9
5	Մարտիրոսյան Սեյրան	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ	3
6	Մուքիսայան Արամ	«Հայաստանի երիտասարդության ազգային խորհուրդ» ՀԿ	0

Մինչ քվեարկության արդյունքների հաստատումը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյանը հանդես եկավ հայտարարությամբ, որում ասվում էր, որ ՀՄՀ-Հայաստանի ծրագրի շրջանակներում իրականացվող «ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում» ծրագիրն առաջացնում է շահերի բախում ՇԽ անդամ Տոնական Ղազարյանի՝ Կառավարման խորհրդում անդամակցության համար: Այդ ծրագիրը ուղղված է ՋՕԸ-երի կարողությունների ամրապնդմանը, ինչպես նշվում է ծրագրի խորագրում: Նախատեսվում է, որ ծրագիրը կսկսվի շուտով, ինչի արդյունքում Տ. Ղազարյանը՝ որպես «Շենիկ» ՋՕԸ-ի տնօրեն, կդառնա ծրագրի ուղղակի շահառու:

Այս կապակցությամբ Կ. Նազարյանը մտահոգություն հայտնեց այն մասին, որ ՋՕԸ-երի ներկայացուցիչները, որոնք ընտրվել էին որպես ՇԽ լիիրավ անդամներ, անհավասար պայմաններում են հայտնվում: Արա Հովսեփյանը կիսեց այդ մտահոգությունը, սակայն առանձնացրեց այն մտտեցումը, որ դրանով էլ ԿԽ-ը և ՇԽ-ը տարբերվում են. ՇԽ-ը որոշումներ

կայացնող մարմին չէ, հետևաբար, ՇԽ-ին անդամակցությունը, ի տարբերություն Կառավարման խորհրդի, որը որոշումներ կայացնող մարմին է, շահերի ակնհայտ բախումներ չի առաջեցնում:

Արա Հովսեփյանը նշեց նաև այն մասին, որ այս խնդիրը վաղ թե ուշ նորից բարձրացվելու է և դառնալու է քննարկման առարկա, քանի որ այս պարագայում շահերի բախումը անխուսափելի է: Նա ՇԽ անդամների ուշադրությունը հրավիրեց խորհրդի վերջին նիստերի քննարկումներին, որտեղ, մասնավորապես, վեր են հանվել այնպիսի խնդիրներ, ինչպես շահերի բախումը, ՀՄԿ դիրքորոշումը շահերի բախման դեպքերում: Իր կարծիքով, այդ ամենից պարզ է դառնում, թե ինչպիսին կլինի ՀՄԿ դիրքորոշումը նմանօրինակ իրավիճակում:

Հանդես եկավ ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը և ներկայացրեց առաջարկությունների հետևյալ շարքը (փաթեթ)`

ա) անկախ ամեն ինչից հաստատել ընտրության արդյունքները,

բ) խնդրել Տ. Ղազարյանին ներկայացնել իր կարծիքը խնդրի շուրջ և պարզաբանել արդյոք իր կարծիքով կա շահերի բախում,

գ) խնդրել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին տալ իրավաբանական եզրակացություն:

ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանը նույնպես արտահայտեց այն կարծիքը, որ ընտրության արդյունքները պետք է հաստատել:

ՇԽ անդամ Կ. Նազարյանն առաջարկեց ՇԽ անդամներին լինել վճռական և որոշում կայացնել երկու տարբերակների միջև` կա՛նք ընդունել Ա. Հովսեփյանի կողմից ներկայացված փաստարկները, որ այս պարագայում շահերի բախումը անխուսափելի է, կա՛նք հաստատել ընտրության արդյունքները և առաջիկայում փորձել պաշտպանել ՇԽ դիրքորոշումը:

Ս. Սարգսյանը քննարկվող հարցի կապակցությամբ հարց բարձրացրեց, թե արդյոք այս ամենը նշանակում է, որ ՋՕԸ-երի ներկայացուցիչները չեն կարող ներկայացված լինել ԿԽ-ում: Ա. Հովսեփյանը պատասխանեց, որ դա անխուսափելի իրողություն կլինի այնքան ժամանակ, քանի դեռ «ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում» ծրագիրն իրականացման փուլում է:

Ամփոփելով բոլոր առաջարկությունները նախագահողն առաջարկեց`

1. հաստատել ընտրության արդյունքները, համաձայն որի ՇԽ անդամ Տ. Ղազարյանը ընտրվում է ԿԽ թափուր պաշտոնում.

ընտրության արդյունքները հաստավեցին միաձայն:

2. դիմել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին տալ իրավաբանական եզրակացություն վերոնշյալ խնդրի կապակցությամբ. առաջարկությունը չքվեարկվեց, սակայն դեմ արտահայտվողներ չեղան:

Նախագահողն առաջարկեց Տ. Ղազարյանին ներկայացնել իր դիրքորոշում հարցի կապակցությամբ: Տ. Ղազարյանի իր խոսքում կարևորեց հետևյալ կետերը.

1. ինքը ՇԽ-ում և առաջին, և երկրորդ տարում ընտրվել է որպես Հայաստանի ոռոգման ոլորտի ներկայացուցիչ, և ներկայացնում է Հայաստանում գործող բոլոր ՋՕԸ-երին, քանի որ առաջադրվել է ՋՕԸ-երի ընդհանուր ժողովում.

2. ինքը հանդիսանում է «Շենիկ» ՋՕԸ-ի նախագահը, որը ընտրովի մարմին է. այն գործադիր մարմին չէ.
3. հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և ծավալված բուռն քննարկումները՝ ինքը հրաժարվում է իր նորընտիր պաշտոնից այն պարագայում, եթե շահերի բախումը իրապես անխուսափելի է:

Նախագահող՝

Ա. Սաքունց

Քարտուղար՝

Վ. Գրիգորյան

6-ր մայիսի, 2008